ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ԳՀԱՊՁԲ-22-3/3-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 11.04.2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Է. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 02.03.2022թ. կնքված №ԳՀԱՊՁԲ-22-3/3-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի №1Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 4 980 000 (չորս միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ.ք.Երևան, Արշակունյաց 12
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1510001906200100
ՀՎՀՀ 02522757	ՀՎՀՀ 02556646
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Գլխավոր տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-22-3/3-1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	չ/մ	Քանակը	Մեկ միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Ապրանքի մատակարարումը 2022թ., Ըստ եռամսյակների
						2-րդ եռամսյակ
1(9)	մեդալներ, կրծքանշաններ (Մեդալներ)	հատ	300	1200	360 000	300
2(10)	մեդալներ, կրծքանշաններ («Քաջարի մարտիկ» կրծքանշան)	հատ	1,000	954	954 000	1,000
3(11)	մեդալներ, կրծքանշաններ («Հայոց բանակի գերազանցիկ» կրծքանշան)	հատ	1,000	864	864 000	1,000
4(12)	մեդալներ, կրծքանշաններ («ՀՀ ԶՈՒ լավագույն զինվոր-մարզիկ» կրծքանշան)	հատ	1,000	864	864 000	1,000
5(13)	մեդալներ, կրծքանշաններ («Մարտական հերթապահություն» կրծքանշան)	հատ	2,000	969	1 938 000	2,000

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-22-3/3-1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ., ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 26.12.2022թ.		
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1(9)	մեդալներ, կրծքանշաններ (Մեդալներ)	18511180/517	360 000	360 000	360 000
2(10)	մեդալներ, կրծքանշաններ («Քաջարի մարտիկ» կրծքանշան)	18511180/518	954 000	954 000	954 000
3(11)	մեդալներ, կրծքանշաններ («Հայոց բանակի գերազանցիկ» կրծքանշան)	18511180/519	864 000	864 000	864 000
4(12)	մեդալներ, կրծքանշաններ («ՀՀ ԶՈՒ լավագույն զինվոր-մարզիկ» կրծքանշան)	18511180/520	864 000	864 000	864 000
5(13)	մեդալներ, կրծքանշաններ («Մարտական հերթապահություն» կրծքանշան)	18511180/521	1 938 000	1 938 000	1 938 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1
«ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ գլխավոր տնօրեն

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ